ՍՏԵՓԱՆՈՍ ՆԱԽԱՎԿԱՅԻ ԿԵՐՊԱՐԸ ՀԱՅ ՄԻՋՆԱԴԱՐԵԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԲԱՆԱՀԻՍՈՒԹԵԱՆ ՄԷՋ

ԼԻԱՆԱ ԱՒԵՏԻՍԵԱՆ
Lian19921992@mail.ru

ՄՈՒՏՔ

Սուրբ Ստեփանոսը ընդհանրական եկեղեցու սրբերից է: Միջնադարեան տաղերում յանուն Քրիստոսի առաջին նահատակը արդէն ի յայտ է գալիս որպէս յանուն քրիստոնէութեան ինքնազոհաբերութեան խորհրդանիշ: Նա նաեւ համարւում է Քրիստոսի առաջ բարեխօս, դրանով իսկ մտնելով բարեխօս-սրբերի խմբի մէջ՝ Աստուածածնի, Յովհաննու Կարապետի եւ Գրիգոր Լուսաւորչի կողքին: Այս թեմային անդրադարձել է Ներսէս Շնորհալի կաթողիկոսը իր՝ «Քարոզ Ձայնիւ Յաւետարանին, Տեառն Ներսէսի» տաղի մէջ[1]: Ստեփանոսի վարքը արծարծում է ճառընտիրներում, յայսմաւուրքներում եւն.: ԺԹ. դարից սկսած գրառուել են Ստեփանոս Նախավկային նուիրուած ժողովրդական աւանդազրոյցներ, երգեր, հանելուկներ, որոնց մէջ նրա հետ կապուած են աստուածաշնչեան պատումներից շեղուող *մոտիվ*ներ: Հայ Եկեղեցին Ստեփանոս Նախավկայի յիշատակը նշում է Դեկտեմբերի 26ին:

ՍՏԵՓԱՆՈՍ ՆԱԽԱՎԿԱՅԻ ԱՍՏՈՒԱԾԱՇՆՉԵԱՆ-ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԿԵՐՊԱՐԸ

Ս. Ստեփանոս Նախավկան (Πρωτομάρτυρας Στέφανος, St. Stephen Protomartyr, Сте́фан Первому́ченик, «Ստեփանոս» անունը յուն. Նշանակում է պսակ), բոլոր մարտիրոսներից անդրանիկն է, Քրիստոսի համար նահատակուած առաջին նախասարկաւագը: Ստեփանոսի սիրոյ եւ անմնացորդ նուիրումի մասին են *Գործք Առաքելոց*ի 6-8րդ գլուխները՝ «*Ստեփանոս, այր լի շնորհօք եւ զօրութեամբ, առնէր արուեստս եւ նշանս մեծամեծս ի ժողովրդեանն*»:

Նա ոչ միայն օգնում էր կարիքաւորներին, նեղեալներին, այլեւ՝ Սուրբ Հոգուց ներշնչուած համարձակօրէն քարոզում էր Աստծու խօսքը եւ հրաշքներ գործում՝ Աստծոյ անունով: Նրա համբաւը շարժում է հրեաների եւ քահանաների նախանձը, որոնք Ստեփանոսին յանձնում են հրեաների բարձրագոյն ատեանին: Սրանք էլ սուտ վկաներ են բերում, որոնք ասում են. «*Այրս այս ոչ դադարէ խօսել բանս հայհոյութեան զտեղւոյն սրբոյ եւ զօրինացն: Լուաք ի դմանէ զի ասէր թէ Յիսուս Նազովրեցի, նա քակեսցէ զտեղիս զայս, եւ փոխեսցէ զօրէնս զոր եւր մեզ Մովսէս: Եւ հայեցեալ ի նա ամենեցուն որ նստէին յատենին, տեսին զերեսս նորա իբրեւ զերեսս հրեշտակի*» (Գործք 6.13-15):

Ի պատասխան այս մեղադրանքների նա սկսում է մեկնել Հին Կտակարանը. Աբրահամից սկսեալ, հերթականօրէն թւում է Յիսուսի մասին մարգարէների կանխասացութիւնները եւ բացատրում, որ քրիստոնէութիւնը ոչ թէ ժխտումն է մովսիսական կրօնի, այլ այդ կրօնի մարգարէութեան իրագործումն ու ամբողջացումը (Գործք 7.1-53): Նրա խօսքերը վրդովեցնում են ներկաներին. այդ պահին Ստեփանոսը երկինք է նայում եւ ասում. «*Ահա տեսանեմ՝ զերկինս բացեալ, եւ զՈրդի մարդոյ զի կայ ընդ աջմէ Աստուծոյ*»: Այդ խօսքերից յետոյ սրբին քարկոծում են: Քարկոծուելիս Ստեփանոսը անդադար աղօթում է. «*Տէր Յիսուս, ընկալ զհոգի իմ*»: Ու ծնկի գալով բարձրաձայն աղաղակում. «*Տէր, մի՛ համարիր դոցա զայս մեղս*», եւ այս ասելով մահանում (Գործք 7.53-59):

Յայսմաւուրքներում Ստեփանոսը յիշատակւում է միքանի անգամ, հետեւեալ ամսաթուերին.- Դեկտեմբերի 26 (Քաղոց 18), Սեպտեմբերի 15 (Յոռի 6), Յունուարի 7 (Քաղոց 30) եւ Օգոստոսի 2 (Հրոտից 27):

Դեկտեմբերի 26ին նշւում է «մեծահանդէս տօն», նուիրուած սուրբ եւ փառաւոր մեծ նախավկայի՝ Քրիստոսի առաջին մարտիրոսի, նախապսակ նախասարկաւագի, աշակերտի եւ առաքեալի՝ սուրբ Ստեփանոսի պատուին: Ստեփանոսին տրւում են հետեւեալ բնութագրումները. հոգեւոր պսակ, հաւատի բազմածաղիկ բոյս, սիրոյ անուշահոտ վարդ, յոյսի անթառամ ծաղիկ, խոստովանութեան անխզելի աշտարակ, համբերութեան անսասանելի նահատակ[2]:

Սեպտեմբերի 15ին տօնւում է Ստեփանոսի նշխարների տեղափոխումը Երուսաղէմից Կ. Պոլիս: Սսի, Այրիվանքի եւ Տաթեւի վանքերում այդ օրը նշուել է գիւտ նշխարաց սրբոյն Ստեփանոսի Նախավկայի տօնը: Նշխարների գիւտի եւ Երուսաղէմի Ս. Ստեփանոսի բազիլիկի շինարարութեան պատմութիւնը Յայսմաւուրքում ներկայացուած է այսպէս. ոմն մեծատուն եւ վկայասէր Աղեկսանդրոս Երուսաղէմում տաճար է կառուցում ի պատիւ Ստեփանոս Նախավկայի[3]:

Յունուարի 7ին տօնւում է Յովհաննէս Մկրտչի, Ստեփանոս Նախավկայի եւ ամենասուրբ Աստուածածնի յիշատակը: Յունուարի 7ի տօնի խորհուրդի մէջ ներկայացւում է Ստեփանոսի պաշտամունքի աստուածաբանութիւնը.

Սուրբ Ստեփանոսը Քրիստոսի նախավկան էր, առաջին վկան եւ մարտիրոսը, որ բարձրացել է երկինք եւ ոչ թէ իջել անդունդ ու դժոխք: Հրեաները հայհոյում էին նրան, սակայն նա վկայում է որ ճշմարիտ Աստուածը Նա է, որին իրենք սպանել են, որը ծնուել էր Ս. կոյս Մարիամից եւ մկրտուել Յովհաննէս Մկրտչի կողմից: Նախավկան պէտք է նահատակուէր. «*Զի պարտ է ճշմարիտ քահանայապետին Քրիստոսի մտանել ի Սուրբն Սրբոց, ընդ նմին լինել եւ տեսանել սարկաւագին՝ Սուրբ Ստեփանոսի Նախավկային Քրիստոսի: Եւ ուր թագաւորն բազմի, անդ կալ եւ*

զինուորին: Այս խորհրդովս կատարի յիշատակ սոցայ յեկեղեցիս Քրիստոսի, որում փառք յաւիտեանս. Ամէն»[4]:

Յետոյ բացատրում է, թէ ինչու է կատարում Ս. Ստեփանոսի յիշատակը. նա հետեւել է իր Տիրոջը, որին եւ պէտք է սպասաւորէր ու սարկաւագ լինէր: Ստեփանոսը հալածելու ժամանակ գլուխը բարձրացնում է դէպի երկինք եւ տեսնում Աստծուն: Եւ Տէրը ասում է. «*Դա է որդի իմ սիրելի, ընդ որ հաճեցայ: Որոյ այսաւր եւ Հոգին Սուրբ աղաւնակերպ երեւմամբ իջեալ վկայեաց ծայնիւ Հաւր, երեւեցոյց զփառակիցն իւր՝ ճշմարիտ թագաւոր երկնի եւ երկրի*»[5]:

Օգոստոսի 2ին տօնում է Վերադարձումն նշխարաց սրբոյն Ստեփանոսի Նախավկային Քրիստոսի: Այս տօնը բնորոշ է նաեւ Կաթողիկէ եկեղեցուն:

Տօնը կապուած է հետեւեալ իրադարձութեան հետ, որը յայտնի է եկեղեցական աւանդութեան ձեւով. երբ Ստեփանոս Նախավկան քարկոծում եւ մահանում է, Գամաղիէլն ու Նիկոդիմոսը թաղում են նրան ագարակում, սակայն թաղման տեղը անյայտ է մնում: Երուսաղէմում՝ Ոնորիոսի եւ Թէոդոսի թագաւորութեան ու Յովհաննէսի՝ հայրապետութեան ժամանակ, Ղուկիանոս անունով քահանային տեսիլք է գալիս սուրբ Գամաղիէլը՝ պայծառ հանդերձով եւ ոսկի գաւազանով ու հրամայում է հանել Ս. Ստեփանոսի նշխարները եւ տանել Երուսաղէմ: Հայրապետը հրամայում է հանել եւ տանել նշխարները Երուսաղէմ: Այդ ժամանակ Աղեկսանդրոս անունով թագաւորն իր կնոջ՝ Յուլիանայի հետ գալիս է Երուսաղէմ եւ կառուցում եկեղեցի՝ Նախավկայ անունով ու նշխարները դնում այնտեղ: Եւ երբ վախճանւում է Աղեկսանդրոսը, նրան դնում են Ս. Ստեփանոսի կողքին: Շատերն ուզում էին ամուսնանալ նրա շատ գեղեցիկ կնոջ հետ, սակայն նա չէր ցանկանում, եւ հայրապետին խնդրում է վերցնել իր ամուսնու մարմինը եւ տանել Կ. Պոլիս: Հայրապետը թոյլ է տալիս, սակայն կինը շփոթմունքով իր ամուսնու տապանի փոխարէն վերցնում է Ս. Ստեփանոսի տապանը, որտեղ էլ լինում են սրբի նշխարները: Եւ երբ գնում են Ասկոլոն քաղաք, հրեշտակի ձայն է լսում, որն ասում է. «Սա է սուրբ Նախավկայն Ստեփանոս», եւ անուշ հոտ է բուրում: Կինը ուրախանում է Աստծու այս պարգեւից եւ քաղաքում շատ դիւահարներ են բժշկում: Եւ երբ նաւ է վարձակալում Կ. Պոլիս գնալու համար, ծովում փոթորիկ է սկսում, նրանք աղաղակում են Տիրոջը եւ Ս. Նախավկային, եւ նա երեւում ու քաջալերում է, ծովը հանգստանում է, տապանին լոյս է իջնում: Երբ հասնում են Քաղկեդոն, վեց օր հանգստանում են, բազում հիւանդների են բժշկում: Դեւերը աղաղակում էին. «Վա՜յ մեզ, զի եկն Նախավկայն Ստեփանոս հալածել զմեզ»[6]:

Եւ երբ հասնում են Կ. Պոլիս, եւ նրանց հռչակը տարածւում է, Թէոդոս թագաւորն ու Ատտիկոս հայրապետը ջահերով ընդառաջ են գնում: Եւ մի

դիւահար կին աղաղակում է. «Ո՜, *բռնութեան Սրբոյն Նախավկայիս, որ եկն ի քաղաքս յայս հալածել մեզ*»[7]:

Այս տեսնելով տեռատիները (կանացի հիւանդութիւն ունեցողներ) եւ այլ հիւանդներ գալիս եւ կպնում են տապանին ու բժշկւում: Եւ թագաւորը ոսկեպատ կառքով նշխարները տանում է քաղաք, եւ երբ հասնում է Կոստանդիանոսի հրապարակ, կառքը կանգնում է եւ լսւում է ձայն. «Աստ հաճեցաւ Աստուած բնակիլ սուրբ Նախավկայիդ»[8]:

Ս. Ստեփանոսի նշխարների գիւտի մասին վկայութիւններ կան բոլոր ճառընտիրներում: Մէկ այլ աւանդութիւն ենք տեսնում Մկրտիչ Եպս. Աղաւնունու մօտ, ըստ որի, Ղուկիանոս քահանան նոյն գիւղի Գաբատաղիա ագարակի մէջ գտնում է Ստեփանոսի, Նիկոդիմոսի, Գամաղիէլի եւ նրա որդու Աբիբայի նշխարները: Երուսաղէմի Յովհաննէս պատրիարքը նշխարների մեծ մասը հանդիսաւորութեամբ տեղափոխում է Սիոնի վերնատուն, որն էլ վերածում է եկեղեցու: Ոչ մի վկայութիւն չկայ, թէ ուր են թաղել Ստեփանոսի մարմինը: Սիոնի Ս. Ստեփանոս եկեղեցին հին դարերից համարւում է հայկական սեփականութիւն, որը յիշատակւում է մինչեւ 1370: 1334ին այնտեղ ընդօրինակուած գրչագիրեր են պահպանուել Ս. Յակոբ Վանքի ձեռագիր մատենադարանում[9]:

Ինչպէս տեսնում ենք վերոյիշեալ պատումից, Հայ Առաքելական Եկեղեցու աւանդութեան մէջ գոյութիւն ունէր Ս. Ստեփանոսի եւ նրա նշխարների հիմքով առաջին վկայարան-եկեղեցին կառուցելու մասին պարականոն պատմութիւն, որի մէջ հանդէս են գալիս աստուածաշնչեան (Գամաղիէլ, Նիկոդիմ), պատմական (Թէոդոս կայսր, Երուսաղէմի հայրապետ Յովհաննէս, Ատտիկոս) եւ կեղծ-պատմական, առասպելական անձնաւորութիւններ (Աղեկսանդր եւ իր կին Յուլիանա):

Շարականոցում Ս. Ստեփանոսի տօների ժամանակ կատարուող երգասացութեան կանոնի հեղինակութիւնը պատկանում է Յովհաննէս Օձնեցի կաթողիկոսին: Դա ինքնին նշանակում է, որ Ը. դարում Հայ Առաքելական Եկեղեցին արդէն իսկ ունէր Ս. Ստեփանոսին նուիրուած զարգացած ծիսակարգ: Կանոնում նշւում է, որ Ստեփանոս Նախավկան բարի նահատակ է, որը մտել է յափտենական խորհրդի վերնատուն, թագաւորի կողմից պսակուել է անթառամ պսակով: Կանոնում նրան համարում են Քրիստոսի ճգնաւոր: Ստեփանոսը բարեխօս է առ Քրիստոս, նա թողութիւն է խնդրել ժողովրդի եւ իր ուխտաւորների համար[10]:

Ստեփանոս Նախավկայի կերպարին անդրադարձել է նաեւ Ներսէս Շնորհալին՝ «Տաղ Սրբոյն Ստեփանոսի Նախավկայի, Տեառն Ներսէսի Կաթողիկոսի» տաղի մէջ[11]: Այնտեղ Շնորհալին Ստեփանոսին համեմատում է սիրաբողբոջ ծաղկի, քաղցրահամ պտուղի, նախամարտիկ վկայի, պսակի, իմաստութեան բաժակի եւ նշում, որ նա նման է եղել հրեշտակի:

...Ի խաչին փընկեալ որթոյն
Ողկոյզ վաղահաս խայծեալ[12]...

...Փառաց թագաւորն երկնից
Յայտնեալ զինուորին յերկրի
- Ի յասպարիսիդ վասն իմ
Դու մի՛ երկընչիր,- ասէ[13]*:..*
...Սուրբդ Ստեփանոս պսակ
Եւ նախամարտիկ վրկայ,
Վասըն տաւնողացըս քո
Լեր միշտ բարեխաւս առ Տէր[14]*...*
...Խաչին խաղաղոյ զիմաստութեան բաժակն
Մանկանց Սիոնի նորոյ ի յուրախութիւն
Մատրռուակելով, սուրբըն Ստեփանոս[15]*...*

Այստեղ առաջին անգամ ենք հանդիպում ոչխարի եւ գառան կերպարին. կարող ենք ասել, որ դա տեսնում ենք միայն Ներսէս Շնորհալու մոտ:

Կացեալ յատենի վասն ոչխարին իւր, գառն
Որոջ վայելուչ կըտրեալ գեղմըն լուսակիզն
Հրէական ձեռաւք, սուրբըն Ստեփանոս[16]:

Նա համարւում է Քրիստոսի առաջ բարեխօս:

...Ստեփանո՛ս, պըսակ շնորհաց զքեզ պըսակողին,
Լեր միշտ բարեխաւս զմեզ կեցուցանել[17]*...*
...Ամէնաւրհնեալ կուսի Մարիամու Աստուածածնի՝
Մեծին ի ծնունդս կանանց,
Նախահրաւէր այսմ շնորհի Մկրտչին Յովհաննու,
Նախնոյ վկայից եւ սարկաւագաց՝ սրբոյն Ստեփանոսի,
Առաքելովք եւ մարգարէիւք,
Մարտիրոսաւք եւ ճգնաւորաւք,
Եւ համարէն սովաւ աւծելովք արդարոցն
Եւ որ այսր աւծմամբ զմեզ Լուսաւորչի՝ սրբոյն Գրիգորի[18]:

Ստեփանոսի պատմութեանը անդրադարձել է նաեւ Գրիգոր Տաթեւացին: Իր *Քարոզգրքի* «Ամարան Հատոր»ում զետեղուած մանրամասն աստուածաբանական վերլուծութեան[19] մէջ, Տաթեւացին ոչ միայն մեկնում է Նախավկային վերաբերող աստուածաշնչեան հատուածները, այլեւ կարեւորագոյն յաւելում է անում.

«Չի բազմերջանիկ վկայն Քրիստոսի էր իր թագաւորական զարմէն Յուդայի. ցեղակից եւս Քրիստոսի պատուեալ. եւ օրինապահ ծնողազաւակ: Եւ յորժամ ըմբռնեցաւ Քրիստոս ի դատաստան մահու, էր սա պատանի հասակաւ. եւ ծառայ քահանայապետին Կայիափայ: Իսկ նա աղէխարշեալ եւ բազում արտասուօք տեսեալ զմահ նորա եւ զթաղումն, եւ ուրախացեալ ընդ առաքեալսն յարութեամբն Քրիստոսի, յարեցաւ ի

նոսա եւ մկրտեցաւ ի Պետրոսէ եւ ի Յոհաննու: Եւ տեսեալ առաքեալքն պսակ կազմեալի լուսոյ ի վերայ ջրոյն, հանգեաւ ի վերայ նորա: Եւ վասն այնր անուանեցին զնա Ստեփանոս՝ որ է պսակաւոր»[20]:

Ինչպէս տեսնում ենք, Տաթեւացին բերում է աստուածաշնչեան պատմութիւնից տարբեր մի պատմութիւն՝ Յիսուսի եւ Ստեփանոսի առաջին հանդիպման մասին, որ տեղի է ունեցել դեռեւս Տիրոջ երկրային կեանքի օրօք:

Ըստ Տաթեւացու, Ստեփանոսը առաջին նահատակաց հանդիսադիրն է, երիցս երանելի է, պատկերով նախատիպն է Քրիստոսի եւ դեռ մօր որովայնում է ընտրեալ եղել: Ստեփանոսը բազմաթիւ շնորհներ ունէր. դեւերին էր հալածում, հիւանդներին բժշկում, մխիթարում եւ սփոփում այրիներին, խնամում որբերին, ընկածներին պաշտպանում, իսկ անիրաւներին՝ յանդիմանում:

Ըստ Տաթեւացու, տօնին պատրաստում էին նախօրօք. եկեղեցու մանկունք ի պատիւ սրբի՝ գիշերային հսկում էին կատարում, որի ժամանակ զարդարում էին խաչը, կանթեղը, մոմերը եւ խունկ էին ծխում: Սա տեսնում ենք առաջին հերթին Ներսէս Շնորհալու մօտ, որտեղ նա եւս նշում է, որ գիշերային հսկում է կատարւում:

Հմայիլներում նոյնպէս հանդիպում ենք Ստեփանոս Նախավկային նուիրուած աղօթքի.

Ի քեն հայցեմք արտասուքին,
Նախավկայ Տէր Արարչին,
Սբ. Ստեփանոս բարձօղ երկնի,
Տեսանող ես աջմէ Ծնօղին:
Տալ մեզ հանգիստ ի անկողնի,
Արթուն լինել առաւօտին[21]...

ՍՏԵՓԱՆՈՍ ՆԱԽԱՎԿԱՅԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԵՒ ԲԱՆԱՀԻՍԱԿԱՆ ԿԵՐՊԱՐԸ

Ստեփանոս նախավկային վերաբերող ժողովրդական նիւթերը կարելի է դասակարգել ըստ սեռի (բայաթի, հանելուկ, աւանդազրոյցներ...), ըստ տեղի (Բոլնիս-Խաչէն, Ջաւախք, Գիւմրի, Սպարկերտ), ըստ զրոյցի՝ սրբավայրի հետ առնչութեան, ըստ տօների (Ծաղկազարդ, Տեառնընդառաջ):

Ղազարոս Աղայեանը յիշատակում է, հաւանաբար, իր ծննդավայրի հայոց մէջ տարածուած երգի հետեւեալ մոտիւը.

«Այս բայաթին մի հայ սուրբի համար է ասուած.
Պապիկն եմ ես այս քարից,
Այս պառակից՝ այս քարից
Ոչ հայր ունիմ եւ ոչ մայր
Ծնունդ առայ այս քարից»[22]:

Այստեղ տեսնում ենք, որ սուրբը ծնւում է քարից: Ելնելով ներքոյիշեալ նիւթից, որը գրանցել է Երուանդ Լալայեանը Ջաւախքում, եւ որում նշւում է, որ Տեառնընդառաջի տօնի ժամանակ քարից ծնւում է երեխայ, որն էլ հենց Ստեփանոս Նախավկան է, ենթադրում ենք, որ այդ բայաթին վերաբերում է Ս. Ստեփանոսին.

Տեառնընդառաջին, երբ բազմաթիւ կանայք երեխաները գրկերը շտապում էին դիմաւորելու Աստուածամօրը եւ աղջիկներն իրաւունք չունէին մասնակցելու, մի օրիորդ դնում է քար գոգնոցի մէջ եւ վազում դէպի Ս. Կոյսը: Սրան մօտենալիս յանկարծ լացի ձայն է լսում եւ նայում, տեսնում է գրկում քարը երեխայ դարձած[23]:

Ազգագրական այլ շրջաններում եւս հանդիպում ենք աւանդազրոյցների, որտեղ Ստեփանոսը ծնւում է քարից:

Հին ժամանակներում հայերը Սպարկերտին անուանում էին նաեւ Ս(ուրբ) Պատկեր(ք): Այդ անուանումը կապուած է առանձին զրոյցի հետ, ըստ որի Քրիստոսը իր պատկերը ուղարկում է Սպարկերտ, եւ տեղի անունը մնում է Պատկեր: Երբ Քրիստոսը գալիս է Դարունա գիւղ (Խիզանի մէջ), տղամարդիկ վարդ ու ռեհան ձեռքներին բռնած, կանայք էլ իրենց երեխաներին գրկած ընդառաջ են գնում Քրիստոսին, սակայն մի կին երեխայ չի ունենում, գետնից քար է վերցնում եւ գնում: Երբ ասում է. «Ովսաննա, դու՛ն ես Աստուած», այդ քարը կնոջ թեւին դառնում է տղայ, որն էլ, ինչպէս նշւում է զրոյցի մէջ, Ս. Ստեփանոսն է եղել: Այս զրոյցին կից մի հանելուկ են ասում. «Ան ո՞վ էր՝ անհայր անմայր՝ էղաւ մարգարէ», դա Ս. Ստեփանոսն էր: Դրա հիման վրայ էլ Կոտի գիւղում կառուցել են Ս. Ստեփանոս անունով եկեղեցի[24]: Փաստօրէն, այն, ինչը Աղայեանի նիւթում երգ-բայաթի էր, այստեղ հանդէս է գալիս որպէս հանելուկ:

Հարց է, թէ ինչպէս է տեղի ունեցել անցումը բուն աստուածաշնչեան պատումից՝ ժողովրդական զրոյցները, որոնց պատումները բաւականին հեռու են Աստուածաշնչից:

Ղուկասի աւետարանում Յիսուսի մուտքը Երուսաղէմ հետեւեալ կերպ է ներկայացուած. երբ Յիսուսը եկաւ Երուսաղէմ մարդիկ իրենց զգեստները փռում էին ճանապարհի վրայ, երբ մօտեցան Ձիթենեաց Լեռան, աշակերտների բազմութիւնը սկսեց ողջունել եւ փառաբանել Աստծուն: Եւ ասում էին. «*Օրհնեալ որ գայ թագաւորդ յանուն Տեառն, խաղաղութիւն յերկինս եւ փառք ի բարձունս*»: Իսկ փարիսեցիներից ոմանք ամբոխի միջից ասացին նրան. «Վարդապետ, սաստեա աշակերտացդ քոց»: Նա պատասխանեց եւ ասաց. «*Ասեմ ձեզ զի եթէ դոքա լռեսցեն, քարինքդ աղաղակեսցեն* (Ղուկ. ԺԹ. 35)»:

Գրիգոր Տաթեւացու մօտ տեսնում ենք հետեւեալ պատմութիւնը՝ Յիսուսի մուտքի առնչութեամբ. «*Եւ յորժամ ի տուն նորածին զփրկիչն մեր ա-*

սեն. զվարշամակն որով պատեալ էր զգլուխն, տարածեաց առաջի ոտից Տեառն. եւ գնաց ի վերայ նորա: Եւ յորժամ սաստէին թէ, զի՞նչ գործեցեր, ասաց. այսպէս արարին աշակերտքն եւ ժողովուրդքն յորժամ աւանակաւ գայր յԵրուսաղէմ. եւ ես կամիմ աշակերտիլ սմա եւ երկիրպագանել. եւ ոչ հաւասարիմ անօրէն խորհրդոց ծերոց. եւ վասն այսց բանից՝ գան հարեալ ի քահանայապետէն ի բաց հանաւ ի նմանէ»[25]:

Կայ եւս մէկ ժողովրդական տարբերակ, որը գրի ենք առել դաշտային հետազօտական աշխատանքների ժամանակ, որի համաձայն, երբ Տէրը գալիս է Երուսաղէմ, ասում են՝ ով երեխայ չունի, թող գայ տիրոջը տեսնելու: Գալիս է մի կոյս աղջիկ, որը սանդաքարը բալուլ արած մօտենում է Տիրոջը, եւ Տէրը ասում է. «սանդաքար լռի՛ր լռի՛ր – ձայն հանիր»: Այդ ժամանակ գրկի քարը երեխայ է դառնում[26]:

Ժողովրդական բանահիւսութիւնն ակնարկում է որոշակի տօնական ժամկէտներ: Կապուա՞ծ են դրանք արդեօք Ս. Ստեփանոսի պաշտամունքի ժողովրդական եւ եկեղեցական ժամկէտների հետ: Ստեփանոս Նախավկայի օրը եկեղեցին նշում է Դեկտեմբերի 26ին, իսկ ժողովրդական պաշտամունքում սրբի տօնը ժամանակագրական առումով տարբեր է: Այսպէս, Մաստարա գիւղի Ստեփանոս Նախավկայի ուխտը նշում է Զատիկի (Ս. Յարութեան) տօնին յաջորդ Կիրակին եւ կոչւում է Կանաչ Կիրակի, Սառնաղբիւրի Հոգեաց Վանքի Ս. Ստեփանոսինը՝ Զատիկից երկու շաբաթ յետոյ եւ կոչւում է Կարմիր Կիրակի, Արթիկի Լմբատավանքի ուխտը՝ Հոկտեմբերի առաջին շաբաթը, Կոշի Ս. Ստեփանոսինը՝ Հոկտեմբերի առաջին Կիրակի օրը: Այրիվանքում, Տաթեւում, Սիսում եղել են Ս. Ստեփանոսի մասունքներ եւ կատարուել է նշխարների գիւտի տօն, սակայն 1830ականներին այդ մասունքները տարուել են այդտեղից, հետեւաբար տօնակատարութիւն այլեւս չի կատարւում[27]:

Վահան Տէր Մինասեանը եւս Ս. Ստեփանոսի մասին աւանդազրոյցը կապում է Ծաղկազարդի տօնի հետ: Ըստ նրա տարբերակի, Ծաղկազարդի օրը, երբ Յիսուսը գալիս է Երուսաղէմ, բոլորը ցնծութեամբ դիմաւորում են, բայց մի կին տխուր-տրտում արտասւում էր, որովհետեւ նա ամուլ էր, իսկ ամուլներին արգելուած էր այդպիսի հանդէսների մասնակցել: «*Ա՛հ, կը հեծեծէր այս կինը, ինչու՞ ես ալ Իսրայէլի այս կիներուն պէս մանկիկ մը չունենայի գիրկս եւ անոնց մէջ չխառնուէի եւ այս օրուան Աստուածային օրհնութեան արժանի չըլլայի*»: Տէրը տեսնելով, որ նա արտասւում է Թադէին ուղարկում է նրա մօտ, որպէսզի տեսնի ինչու է այս ուրախ օրը տրտմութեամբ պատում: Կինը ահաբեկուած ասում է. «Տէ՛ր, ամուլ եմ եւ...»: Թադէն ընդհատում է նրան. «*Լալէդ չճաթեցա՞ր, եա, խելք չե՞ս ըներ գիրկդ քար մը առնուլ, պլլել զայն լաթով եւ իբր մանուկ զայն գրկած՝ փութալ ընդ առաջ*»: Բոլոր հաւաքուածները ծիծաղում են, սակայն կինը հետեւում է Թադէի խօսքին, եւ որքան մեծ է լինում բոլորի զարմանքը, երբ նրա գրկի քարը երեխայ է դառնում ու անդադար գոռում. «Ովսան-

նա՛, Ովսաննա՛»: Եւ Յիսուսը իր հակառակորդներին պատասխանում է. «*Եթէ դոքա* (մանկիկները - Լ.Ա.) *լռեսցեն, քարինքդ աղաղակեսցեն*»:

Յետոյ Տէրը նայում է Թադէին, որն այդ քար-երեխայի հեղինակն ու հայրն էր եւ ասում է. «*Թադէ՛, այդ քարէ ծնած չոճուխը քարէ պիտի մեռնի, քարկոծ պիտի ըլլայ, եւ քո ժողովուրդը քարէ ծնած ժողովուրդ թո՛ղ ըլլայ, քարի պէս հաստատուն իր հաւատքին մէջ»: Եւ բոլոր հին աւանդութիւնները, որոնց մէջ են հին Յայսմաւուրքը եւ ժողովածուն, միաձայն ասում են, որ այդ պէպէք քարը սուրբ Ստեփանոսն է, որի կնքահայրը եղաւ Թադէ առաքեալը*»[28]:

Մէկ այլ աւանդազրոյց ենք տեսնում Ն. Ներսիսեանի մօտ, որի պատմութիւնը եւս կապուած է Ծաղկազարդի տօնի հետ: Յիսուսի Երուսաղէմ գալստեան ժամանակ, բոլորը շտապում են նրան տեսնելու, սակայն հրեաների մօտ սովորութիւն կար, որ աղջիկները, նորահարսերը եւ բոլոր այն կանայք, ովքեր երեխաներ չունէին չէին կարող մասնակցել այդպիսի հրապարակային ու ժողովրդական հանդէսների: Սակայն մի նորահարս, որը երեխայ չունէր եւ շատ էր ուզում մայրանալ եւ չդառնալ հասարակութեան ծաղրանքի առարկայ, քարը վերցնում փաթաթում է զանազան մանկական շորերով եւ խառնւում ամբոխին: Եւ երբ Յիսուսը արտասանում է. «Եթէ դոքա լռեսցեն քարինքդ աղաղակեսցեն»՝ նորահարսի գրկում քար-մանուկը կենդանանալով բազմութեան հետ սկսեց աղաղակել «Ովսաննա՛»: Եւ ինչպէս պատմում են, մանուկը Ստեփանոսն էր, առաջին մարտիրոսը, որը նոյնպէս քարով, քարկոծուելով մեռաւ: Քարից ծնուաւ քարով էլ մեռաւ[29]:

Ինչպէս տեսնում ենք՝ եթէ ղեկավարուենք Ղուկասի աւետարանով, այդ մանուկը չէր կարող լինել Ստեփանոսը, սակայն պատմութիւնը կապում է Քրիստոսի մուտքը Երուսաղէմ՝ Նախավկայի հետ: Աւետարանում Յիսուսը հրեաներին պատասխանում է, որ եթէ աշակերտները լռեն քարերը կ'աղաղակեն, իսկ ժողովրդական նիւթերում տեսնում ենք, որ այդ աղաղակող քարերից մէկից է ծնւում Ստեփանոս Նախավկան: Ըստ Ղուկասի, Տիրոջ մուտքի ժամանակ բոլորը հագուստներ էին գցում նրա առջեւ, նման բանի մենք հանդիպում ենք նաեւ Գրիգոր Տաթեւացու մօտ, որտեղ էլ նա նշում է, որ ինքը Ստեփանոսն է վարշամակ գցում Տիրոջ ոտքերի տակ: Ահա այսպէս միմեանց են կցւում Նախավկայի հետ կապուած մի շարք մոտիւներ, ծնունդ տալով ինքնուրոյն մի պատումի:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹԻՒՆ

Ստեփանոս Նախավկայ անունը կրող բազմաթիւ վանքեր, եկեղեցիներ եւ մատուռներ են կառուցուել, որոնց մի մասն ունի իր կենդանի ուխտագնացութեան աւանդոյթը: Դրանց ուխտագնացութեան ժամկէտերը չեն համընկնում սրբի պաշտօնական տօնի հետ: Ս. Ստեփանոս Նախա-

վկայի բուն ժողովրդական պաշտամունքը միանշանակօրէն չի ածանցում պաշտօնական եկեղեցու եւ գրաւոր աղբիւրների աւանդոյթից:

Գրաւոր աղբիւրներում տեսնում ենք, որ Ստեփանոս նշանակում է պսակ, եւ իր այդ անունը բխում է մկրտութեան արարողութեան ժամանակ տեղի ունեցած հրաշքից, իսկ ժողովրդականում նա քարի հետ է կապուած ինչպէս մահով, այնպէս էլ ծնունդով: Ստեփանոսի ծնունդը ժողովրդական նիւթերում կապուած է Տեառնընդառաջի, Ծաղկազարդի տօների հետ: Աւանդազրոյցներից մէկում տեսնում ենք, որ Ստեփանոսին ծնունդ տուողը Թադէ առաքեալն է, եւ նրա ժողովուրդն էլ քարից է ծնում: Եւ քանի որ Հայաստան քրիստոնէութիւն տարածողը հենց Թադէն էր, կարելի է ենթադրել, որ քարից ծնուած այդ ժողովուրդը հայերն էին, իսկ Ստեփանոսը նրանց նախահայրը: Ինչը տեսնում ենք Աղայեանի բայաթիի մէջ, թէ բայաթին մի հայ սրբի մասին է ասուած:

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

---

[1] Ներսէս Շնորհալի, «Քարոզ Զայնիւ Յաւետարանին, Տեառն Ներսէսի», *Տաղեր եւ Գանձեր*, Երեւան, Հայկ ՍՍՀ ԳԱ Հրատ., 1987, էջ 327-8:

[2] *Համաբարբառ Յայսմաւուրք*, Քաղոց ԻԶ, Կ.Պոլիս, 1834, էջ 117-25:

[3] *Համաբարբառ Յայսմաւուրք*, Թ, Ս. Էջմիածին, 2010, Համաքրիստոս. (=Հ) եւ Խիզանի (=Խ), էջ 203:

[4] *Համաբարբառ Յայսմաւուրք*, Ա, Յունուար, աշխ.՝ Եզնիկ Արք. Պետրոսեան, Ս. Էջմիածին, 2008, Անանուն Ա խմագրութիւն, էջ 100-2:

[5] Անդ:

[6] Անդ:

[7] Անդ:

[8] Անդ:

[9] Մկրտիչ Եպս. Աղաւնունի, *Սուրբ Երկրին Սրբավայրերու Աւանդութիւնները*, Երուսաղէմ, Տպ. Սրբոց Յակոբեան Վանքի, 1936, էջ 138-41:

[10] *Շարական Հոգեւոր Երգոց Սուրբ եւ Ուղղափառ Եկեղեցւոյս Հայաստանեայց Յօրինեալ*, Ս. Էջմիածին, 1861, էջ 83-8:

[11] Ներսէս Շնորհալի, «Տաղ Սրբոյն Ստեփանոսի Նախավկայի, տեառն Ներսէսի Կաթողիկոսի»՝ *Տաղեր եւ Գանձեր*, էջ 239-47:

[12] Նոյն, էջ 239:

[13] Նոյն, էջ 240:

[14] Նոյն, էջ 241:

[15] Նոյն, էջ 242:

[16] Նոյն, էջ 243:

[17] Անդ:

[18] Ներսէս Շնորհալի, էջ 327-8

[19] Գրիգոր Տաթեւացի, *Գիրք Քարոզութեան Որ Կոչի Ամառան Հատոր*, Կոստանդնուպոլիս, 1741, էջ 670-80:

[20] Նոյն, էջ 671:

[21] ՄՄ, Հմայիլ № 124:

[22] Ղ. Աղայեանց, «Հայոց Այժմեան Բանաւոր Երգերը», *Տարազ*, 1890, 1, էջ 12:
[23] Ե. Լալայեան, *Ջաւախք. Հաւաքք*, Գիրք Ա., Թիֆլիս, 1896, էջ 323:
[24] Տիգրան Չիթունի, Ե. Չարենցի Անուան Գրականութեան եւ Արուեստի Թանգարանի Արխիւ, 97թ., էջ 18-9:
[25] Գրիգոր Տաթեւացի, էջ 671:
[26] Լ. Սիմոնեան, Կ. Յովհաննիսեան, Լ. Աւետիսեան, ԴԱՆ, Շիրակ, Կապս, 2017, բանասաց՝ Գրիգոր Տեպոյեան (86տ):
[27] Այս տեղեկութեան համար յատուկ շնորհակալութիւն՝ Տաթեւի վանքի վանահայր հայր Միքայէլին:
[28] Վ. Վրդ. Տէր Մինասեան, *Անգիր Դպրութիւն եւ Հին Սովորութիւններ*, Կ. Պոլիս, 1904, էջ 163-4:
[29] Ն. Ս. Տ. Ներսէսեան, «Ստեփանոս», *Բիւրակն*, Կ. Պոլիս, 1899, 50-2, էջ 794:

ST. STEPHANOS: THE PROTOMARTYR'S IMAGE IN MEDIEVAL ARMENIAN LITERATURE AND FOLKLORE

(Summary)

LIANA AVETISYAN
Lian19921992@mail.ru

There are many monasteries, churches and chapels in historical Armenia dedicated to St. Stephan the Protomartyr and some of them have a living tradition of pilgrimage. The dates of those pilgrimages do not coincide with the official date of the saint's commemoration. Folk worship of St. Stephan the Protomartyr does not directly originate from the official Church and literal tradition.

In sources 'Stephanos' is explained as 'wrath', and the name is a consequence of a miracle during the rite of baptism, but in folk tradition the saint is connected with stones by his birth as well as by his death. Stephan's birth occurs either on *Tearn'ndaraj* (Candlemas) or on *Tskhkazard* (Palm Sunday).